



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ**  
**ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ**  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: [Prelacy@aol.com](mailto:Prelacy@aol.com)



**ԹԵՄԻՍ ԱԶԳ. ԵՐԵՍՓՈՒԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ 34ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՆԱԽՕՐԵԱԿԻՆ**

**ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆՑ ԵՒ ՏԻԿՆԱՆՑ**  
**ՄԻՈՒԹԻՆՆԵՐՈՒ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ**

**- ՆՇՈՒԵՑԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԻՆ ՁԵՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ 30ՐԴ**  
**ԵՒ ԸՆՏՐՈՒԹԵԱՆ 10ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԵՐԸ**

Արեւմտեան մեր Թեմը ունի տարիներու օգտակար աւանդութիւն մը. իւրաքանչիւր Երեսփոխանական Ժողովի նախօրեակին, ծխական բոլոր շրջաններու հոգաբարձութիւններն ու տիկնանց միութեանց վարչութիւնները ի մի կը խմբուին, փոխադարձաբար ծանօթանալու աշխատանքներուն, իրարմէ փորձառութիւն քաղելու եւ ծրագրելու միացեալ գործունեութեան յառաջիկայ դաշտերը:

Այս տարի, Հոգաբարձութեանց ու Տիկնանց Միութեանց վարչութիւններու համագումարը տեղի ունեցաւ Հինգշաբթի, 18 Մայիս 2006ի երեկոյեան ժամը 7:30ին, Ս. Կարապետ Մայր եկեղեցւոյ «Կարապետեան» սրահին մէջ, նախագահութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի եւ մասնակցութեամբ Հոգեւորականաց Դասու, Կրօնական Ժողովի ու Ազգային Վարչութեան անդամներու:

Եկեղեցւոյ կողմէ կազմակերպուած պատշաճ հիւրընկալութենէ մը ետք, Առաջնորդ Սրբազանը աղօթքով կատարեց համագումարին բացումը: Ան ողջունեց ներկաները, յատկապէս մեր Թեմի ընտանիքին նոր միացած Ռիվըրսայտի, Զրեսենթա Հովիտի ու Լաս Վեկասի ծխական համայնքներուն ներկայացուցիչները, փառք տուաւ Աստուծոյ, որ տարի մը եւս շնորհած է բոլորին՝ մեր ժողովուրդին ծառայութեան դաշտին մէջ իրագործումներ կատարելու: Ան նկատել տուաւ, որ Չորեքշաբթի, 17 Մայիսի Հոգեւորականաց Համագումարն ու սոյն հաւաքը կ'իյնան Ազգ. Երեսփոխանական Ժողովի 34րդ նստաշրջանի ծիրին մէջ: Խօսելով այս համագումարին նպատակներուն մասին, ան շեշտեց, որ կազմերու միջեւ փորձառութեանց փոխանակումով հարստացած՝ պիտի կերտենք մեր յառաջիկայ աշխատանքները:

Համագումարը վարեց Ազգ. Վարչութեան փոխ ատենապետ Տոքթ. Յակոբ Տէր Սկրտիչեան: Ան ողջունեց ներկաները, ապա հրաւիրեց ծխական շրջաններու ներկայացուցիչները՝ հակիրճ զեկուցումներ տալու իւրաքանչիւր շրջանի միամտայ գործունեութեան ու մտահոգութիւններուն մասին:

Ներկայացուած զեկուցումները ընդգրկեցին մեր եկեղեցիներուն յարկերուն ու հովանաւորութեան տակ տեղի ունեցող աշխատանքի բոլոր դաշտերը՝ տօնախմբութիւններ, տարեկան զանազան ձեռնարկներ, դպրաց դասերը, երիտասարդական ու պատանեկան խմբակները, Կիրակնօրեայ վարժարաններն ու

Ս. Գրային սերտողութեան պահերը: Նորակազմ շրջանները գեկուցեցին իրենց կազմաւորման ու սկիզբ առած աշխատանքներուն մասին:

Մէկտեղուած տեղեկութիւններէն ի յայտ եկաւ, որ անցնող մէկ տարուան ընթացքին, բոլոր շրջաններն ալ իրենց ընթացիկ աշխատանքներու ծիրը տարածելու կողքին, յատուկ կարեւորութիւն ընծայած են նոր սերունդի ներգրաւման ու անոնց հոգեկան հարստացման աշխատանքներուն, գրեթէ բոլոր շրջաններուն մէջ թափ ստացած են երիտասարդական միութեանց գործունէութիւնները եւ Ս. Գրային սերտողութեան աշխատանքները, եւ այս բոլորը՝ երիտասարդութիւնը անբաղձալի ազդեցութիւններէ հեռու պահելու եւ մեր եկեղեցական ու ազգային ժառանգութեանց հաղորդակից դարձնելու նախանձախնդրութեամբ:

### **ՅՈՒՇԱՆՈՒՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐՔԱՉԱՆԻՆ**

Չեկուցումներէն ետք, Ազգ. Առաջնորդարանի Զրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն Գերպ. Տ. Միւռն Շ. Կրդ. Ազնիկեան ընդհանուր գիծերու մէջ ներկայացուց այն աշխատանքները, որոնք կը տարուին այս բաժանմունքին կազմակերպութեամբ:

Իր խօսքի աւարտին, Յայր Միւռն գեղեցիկ անականկալ մը վերապահած էր Առաջնորդ Սրբազանին: Ան յայտնեց, որ Ազգ. Երեսփոխանական Ժողովի 34րդ նստաշրջանն ու գայն կանխող համագումարները կը զուգահիւսին Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազան Յօր կուսակրօն քահանայ ձեռնադրութեան եւ օժման 30րդ եւ Առաջնորդ ընտրութեան 10րդ տարեդարձերուն: Ան հակիրճ կերպով անդրադարձաւ Սրբազան Յօր ծառայական կեանքին ու յայտնեց, որ Թեմիս Յոգեւորականաց դասը, յերախտագիտութիւն Առաջնորդ Սրբազան Յօր ծառայութեան, պանակէ մը կը նուիրէ անոր: Ներկաները ծափողջոյններով միացան գնահատանքին:

Առաջնորդ Սրբազանը շնորհակալութիւն յայտնեց Յայր Միւռնի եւ ներկաներուն, նշեց, որ իր ծառայական կեանքին մեծագոյն մասը անցած են մեր Թեմին մէջ, վերջին տասը տարիները՝ իբրեւ Առաջնորդ: Ապա, ան անդրադարձաւ այս համագումարին ու մեկնելով ներկայացուցած գեկուցումներէն՝ գնահատանք արձանագրեց բոլոր շրջաններուն, իրենց եկեղեցաշէն ու ժողովրդանուէր աշխատանքներուն համար, միաժամանակ մաղթելով, որ յառաջիկային եւս սերտ գործակցութիւնը եւ հանրօգուտ ծառայութիւնները շարունակուին վերանորոգ թափով: Այս իմաստով, Առաջնորդ Սրբազանը ներկայ կազմերուն ուղղեց որոշ թելադրանքներ, աշխատանքներու համակարգումի ու Ազգ. Առաջնորդարանին հետ գործակցութիւնը աւելի եւս սերտացնելու նպատակով:

Համագումարը վերջ գտաւ ժամը 10:15ին, աղօթքով ու Առաջնորդ Սրբազան Յօր պահպանիչով:

Նշենք նաեւ, որ հիւրընկալ եկեղեցին ներկաներուն բաժնեց գեղեցիկ յուշանուէրներ՝ իբրեւ յիշատակ այս երեկոյէն:

### **ON THE EVE OF THE NATIONAL REPRESENTATIVES ASSEMBLY**

## ANNUAL CONFERENCE OF THE BOARD OF TRUSTEES AND LADIES AUXILIARY

### - *THE 30<sup>TH</sup> ANNIVERSARY OF THE PRELATE'S ORDINATION AND THE 10<sup>TH</sup> ANNIVERSARY OF HIS ELECTION OBSERVED*

The Western Prelacy has a beautiful tradition: on the eve of every National Representatives Assembly, the Board of Trustees and Ladies Auxiliary of all of our Parishes hold a conference to discuss their various activities, share their experience, and plan for the future.

This year, the conference took place in the evening of Thursday, May 18, at the "Karapetian" Hall of St. Garabed Church in Hollywood. The conference was held under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and with the participation of members of the Prelacy Clergy, Religious and Executive Councils.

After a reception organized by the host church, the Prelate welcomed the members, and especially the representatives from our new parish communities in Riverside, the Crescenta Valley, and Las Vegas. He thanked the Lord for His blessings and for granting the opportunity to serve our community and people for another year. Speaking on the purpose of the conference, he stressed that by exchanging ideas and sharing experiences we all become enriched and may improve our performance in our future projects.

Following the Prelate's remarks, Dr. Hagop Der Megerdichian, Vice-Chair of the Executive Council, welcomed the guests and subsequently invited the representatives from each parish to give a brief report of the parish activities and concerns. The reports encompassed all aspects of the parish, including various religious ceremonies and events held throughout the year, activities of the church choirs, youth groups, Sunday Schools, and Bible study sessions. The new parish representatives spoke about their organizational efforts.

It was highlighted that during the past year, each parish made great efforts and strides to attract the youth and as a result our youth groups and Bible studies were reinvigorated.

Following the parish reports, Very Rev. Fr. Muron Aznikian, Co-director of the Christian Education Department, briefed about the endeavors undertaken by this department in the past year, followed by his announcement of a surprise for the Prelate. He stated that the 34<sup>th</sup> National Representatives Assembly and the conferences preceding it coincide with the 30<sup>th</sup> anniversary of the Prelate's ordination and the 10<sup>th</sup> anniversary of his election as Prelate. He briefly recounted the Prelate's service over these 30 years and announced that the Prelacy clergy order, on this occasion, present a Panagia (Episcopal Engolpion) to the Prelate.

The Prelate thanked Rev. Fr. Muron and those present, stating that he has spent most of his years of service within the Western Prelacy, as Prelate for the past ten years. He commended all the members present for their hard work and wished them success in future endeavors.

The evening came to an end at 10:15 p.m. with a closing prayer and "Bahbanich" prayer by the Prelate.